ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԱՐԱՄԱՅԻՍ, ՀԱՄԱՍՓՅՈՒՌ, ԱՐՄԻՆԵ, ԱՐՄԱՆ, ԱՐՇԱԿ, ԼԵՎՈՆ, ՄԱՆՈՒՇԱԿ ԱԼԻԽԱՆՅԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՅԼՈՑ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 419-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 2-ՐԴ ԿԵՏԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Արամայիս, Համասփյուռ, Արմինե, Արման, Արշակ, Լևոն, Մանուշակ Ալիխանյանների և այլոց դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կասեցնելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Սույն գործով դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2020 թվականի հուլիսի 21-ին:

Սահմանադրական դատարանի դատական կազմի՝ 2020 թվականի սեպտեմբերի 30-ի ՍԴԴԿՈ-51 որոշմամբ նշված գործն ընդունվել է քննության և 2020 թվականի նոյեմբերի 5-ի ՍԴԱՈ-196 աշխատակարգային որոշմամբ դատաքննությունը նշանակվել է 2021 թվականի հունվարի 19-ին՝ ժամը 11.00-ին:

Սահմանադրական դատարանի 2021 թվականի հունվարի 19-ի ՍԴԱՈ-11 աշխատակարգային որոշմամբ սույն գործի վարույթը կասեցվել է մինչև համապատասխան տեղեկություններ ստանալը:

Սահմանադրական դատարանի 2022 թվականի հունվարի 14-ի ՍԴԱՈ-7 աշխատակարգային որոշմամբ սույն գործի վարույթը վերսկսվել է:

2. Հաշվի առնելով գործով զեկուցող՝ Սահմանադրական դատարանի դատավոր Վ. Գրիգորյանի առաջարկությունն առ այն, որ առկա է «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ գործի վարույթը կասեցնելու հիմք, մասնավորապես՝ անհրաժեշտ է Կառավարությունից սույն գործով պահանջել լրացուցիչ ապացույցներ՝ տեղեկություններ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիային կից Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասության հիմքով ներկայացված դիմումների մասին, Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործի վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

«Արամայիս, Համասփյուռ, Արմինե, Արման, Արշակ, Լևոն, Մանուշակ Ալիխանյանների և այլոց դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կասեցնել մինչև համապատասխան տեղեկություններ ստանալը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

14 հունվարի 2022 թվականի
ՍԴԱՈ-8